1905

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«19» 02 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 036 - 25

Նախաձեռնող՝ *ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր*
Քաղաք Երևան, Պետրոս Ադամյան 14

Գործունեությունը՝ *«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատում*
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 036 - 25

«19» դեկտեմբեր 2025 թ.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրույթային փաստաթուղթ - Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, կառավարման պլան, գծագրական նյութեր

Ներածական մաս. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման պլանը մշակվել է շրջակա միջավայրի նախարարի կողմից հաստատված մեթոդական ցուցումների համաձայն և միտված է փոխարինել ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի №205-Ն որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկ»-ի 2007-2011 թվականների կառավարման պլանին:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ. կառավարման պլանը մշակելիս ապահովվել է բնապահպանական և սոցիալական (ներառյալ առողջապահական) գործոնների համակողմանի գույքագրումը և ներառումը ռազմավարական որոշումների կայացման գործընթացում՝ առաջիկա 5 տարիների համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 21-րդ հոդվածի՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման պլանը հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. Հիմնադրույթային փաստաթուղթը մշակելիս համալիր դիտարկվել է դրանց դրույթների գործողությունների հետևանքով հավանական էական ազդեցությունները և մշակման գործընթացում դիտարկվող ողջամիտ այլընտրանքները՝ առանցքային բնապահպանական խնդիրների տեսանկյունից և բացասական հետևանքներից խուսափելու կամ մեղմելու և դրական ազդեցություններն առավելագույնի հասցնելու նպատակով՝ հիմնված շահագրգիռ կողմերի կարծիքների վրա, ի պաշտպանություն էկոլոգիապես հիմնավորված և կայուն զարգացմանը:

«Սևան» ազգային պարկ»-ը հիմնադրվել է 1978 թվականին, իսկ ՀՀ կառավարության 2002թ.-ի մայիսի 30-ի №927-Ն որոշմամբ «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպվել է «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ազգային պարկ կամ ԱՊ), որի գործունեության առարկան և նպատակը «Սևան» ԱՊ տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Ազգային պարկը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան հատվածում: Շրջապատված է Գեղամա, Վարդենիսի, Սևանի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթաներով ու ընդգրկում է լճի ջրային հայելին և ափամերձ տարածքի ջրից ազատված գրունտները, հիմնականում մինչև շուրջլճյա ավտոճանապարհը:

Պարկի ցամաքային մակերեսն ընդգրկում է Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքներից հատվածները՝ 22.6 հազ. հա, ջրային մակերեսը՝ 124.7 հազ. հա, ընդհանուր՝ 147.3 հազ. հա:

Ազգային պարկի առաջարկվող տարածքը կազմված է իրարից զատ 91 ցամաքային տարածքներից (ներառյալ ցամաքի խորքում ընկած ջրային, ջրաճահճային տարածքները) և Սևանա լճի տարածքից, որոնց ընդհանուր սահմանագիծը կազմում է 1041 կմ, որից միայն 244 կմ-ը լճի ափագիծն է: Ազգային պարկի տարածքը հիմնականում սահմանակցում է համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերին, մասամբ նաև մասնավոր սեփականության հողերին, իսկ Արեգունի լեռների Ցիցսար լեռնագագաթի հատվածում սահմանակցում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքին, որի հետ ունի 4.2 կմ երկարությամբ սահմանագիծ:

«Սևան» ազգային պարկի տարածքի սահմանների վերանայման, ճշգրտման և սահմանագծման համար հիմք են հանդիսացել 2007-2011 թվականների «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի քարտեզները, Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ խոշորացված համայնքների հողային ֆոնդի ու սեփականության սուբյեկտների կադաստրային քարտեզները, կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակից ստացված քարտեզագրական տեղեկատվությունը, ՀՀ կառավարության 2010թ.-ի փետրվարի 11-ի №123-Ն որոշման համաձայն կազմված՝ մինչև 1905.0 բացարձակ նիշը՝ Մ1:1000 քարտեզագրական նյութերը:

ԱՊ-ի պահպանման գոտին ընդգրկում է Սևանա լճի ողջ ջրհավաք ավազանը և Հրազդան գետի ակունքը՝ մինչև Զովաբեր բնակավայրի արևմտյան սահմանը: Այն սկսվում է Սևանի լեռնանցքից (2114 մ), անցնում Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի ծալքաբեկորավոր լեռների, Վարդենիսի և Գեղամա հրաբխային ծագման լեռների ջրբաժաններով: Գեղամա լեռներից հետո պահպանման գոտու սահմանն աստիճանաբար իջնում է դեպի Հրազդան գետ, որից հետո բարձրանում Փամբակի լեռ ների արևելյան հատվածում գտնվող Զոր (2629 մետր), ապա Ուղեռ (2736 մետր) լեռնագագաթները, որտեղից էլ գոտու սահմանը մինչև Սևանի լեռնանցք անցնում է Ձկնագետ գետի ջրբաժանային գծով:

Համաձայն ՌԷԳ հաշվետվության՝ հավաքագրված տարաբնույթ տարածական տվյալների համադրման միջոցով՝ ԱՊ-ի սահմանների վերանայման գործընթացում ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարությունը, Գեղարքունիքի մարզպետարանը, Կադաստրի կոմիտեն և խոշորացված 5 համայնքները: Համատեղ աշխատանքների արդյունքում՝ կառավարման պլանի նախագծում գեներացվել է ազգային պարկի նոր սահմանների առաջարկը, որտեղ ներառվել են հարակից համայնքների հետ ինչպես համաձայնեցված, այնպես էլ չհամաձայնեցված գույքագրված սահմանային հատվածները:

«Սևան» ԱՊ-ի տարածքը, համաձայն կառավարման պլանի առաջարկի, համայնքներում կազմում է՝ Ճամբարակ՝ 7203.55 հա, Վարդենիս՝ 5770.07 հա, Մարտունի՝ 4543.47 հա, Գավառ՝ 4095.77 հա, Սևան՝ 2965.45 հա:

Համայնքներում բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, արդյունաբերությունը, առևտուրը, ձկնորսությունը, պետական և հանրային ծառայություններն ու արտագնա աշխատանքը:

Զբաղվածության ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը, որի հիմնական ճյուղերը կազմում են անասնապահական մթերքների, մեղրի արտադրությունը,

ինչպես նաև կարտոֆիլի, կաղամբի, հացահատիկի և բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցումը:

Մարզի տարածքում գործում են մոտ 40.000 միջին, մանր և խոշոր գյուղացիական տնտեսություններ, 42 բնակավայրերում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաաննպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -36°C: Լճի հակադիր՝ Արեգունու ափին ձմեռը համեմատաբար մեղմ է, նվազագույն ջերմաստիճանը հասնում է -25°C-ի: Բարձրադիր շրջաններում 0°C-ից բարձր օրերի թիվը հասնում է 200-ի, ցածրադիր գոտիներում՝ 260 օր: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին (28°C), նվազագույնը՝ հունվար-փետրվարին: Տարվա միջին ջերմաստիճանը տատանվում է 5-6°C-ի միջև: Բացարձակ նվազագույն և բացարձակ առավելագույն ջերամստիճանները դիտվում են Գավառ բնակավայրում, համապատասխանաբար -33.0°C և 34.1°C: Սևան քաղաքում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը նույնպես հասնում է -33.0°C:

Համաձայն Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի՝ ազգային պարկում առանձնացվել են՝ արգելոցային, արգելավայրային, տնտեսական, ռեկրեացիոն՝ տարածքագործառնական գոտիները:

Պայմանավորված պահպանության ռեժիմի առանձնահատկություններով՝ յուրաքանչյուր գոտի ունի մարդածին գործունեության տարբեր սահմանափակումներ ու կարգավորումներ: Հարկ է նշել, որ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի՝ յուրաքանչյուր բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները (այդ թվում՝ ազգային պարկերի դեպքում վերջինիս տարածքագործառնական գոտիների) սահմանվում են վերջինիս կանոնադրությամբ:

«Սևան» ԱՊ տարածքագործառնական գոտիների՝ մասնավորապես արգելոցային և արգելավայրային գոտիների առանձնացման հիմքում ընկած է ազգային պարկի կենսաբազմազանության հետազոտությունների արդյունքների վրա հիմնված քարտեզագրումը՝ մասնավորապես ՀՀ Կարմիր գրքում գրանցված և ազգային պարկի տարածքում հանդիպող բույսերի և կենդանիների աճելավայրերի և ապրելավայրերի, բազմազանության ու տեսակների կուտակման վայրերի քարտեզագրումը:

Ռեկրեացիոն գոտու առանձնացման հիմքում ընկած է հանգստի և զբոսաշրջության կազմակերպման բնահեն ծառայությունների մատուցման գաղափարը, չխաթարելով պահպանության ներքո գտնվող էկոհամակարգերի ամբողջականությունը, իսկ տնտեսական գոտու դեպքում՝ առկա և պլանավորվող տնտեսական գործունեությունը, որը սակայն ևս չպետք է վնասի էկոհամակարգերի ամբողջականությանն ու կենսունակությանը: Համաձայն բնության պահպանության միջազգային միության կողմից մշակված ուղեցույցի՝ ազգային պարկի տարածքի 75%-ի գործառնական նշանակությունն ուղղված է լինելու կենսաբազմազանության պահպանության առաջնային նպատակին, որն ապահովվում է արգելոցային և արգելավայրային գոտիների միջոցով:

Ազգային պարկի սահմաններում է գտնվում Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճը՝ Սևանը, որի ծավալը 38.1640 կմ^3 է (2022թ. միջին տարեկան), մակերեսը՝ 1278.415 կմ^2 (2022թ. միջին տարեկան), լճի 1900 մ մակարդակի դեպքում: Լիճն Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ^3), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ^3): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ափի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ^2 (լճի ողջ ջրհավաք ավազանի մակերեսի 76.2 %), իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ^2 (լճի ողջ ջրհավաք ավազանի մակերեսի 23.8%-ը): Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն մ^3:

Ազգային պարկի ափամերձ հատվածի ռելիեֆը (լճի ափից մինչև 1916 մ) ալիքավոր է և հարթ: Ափերը հիմնականում մեղմաթեք են, տեղ-տեղ զառիթափ՝ 3-8 մ բարձրությամբ (օրինակ՝ Վարդենիկ-Արծվանիստ, Արտանիշ թերակղզու արևմտյան հատվածների ափերը): Պարկի Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը՝ բարձրությունները 1950-ից 2500 մ, ինչպես նաև Սևան և Արտանիշ թերակղզիներն ունեն բլրապատ, ժայռոտ և կտրտված ռելիեֆ: Ռելիեֆն իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ, թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Խոր ձորերով հոսում են մշտական գետերը՝ Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ջիլ:

«Սևան» ազգային պարկի տարածքն ընդգրկում է Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի և այլ գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման հետևանքով առաջացել են 6-10մ խորությամբ ձորակներ:

«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրոռելիտային տափաստանացված: Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը:

«Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Լճի հատակից ազատված շուրջ 25 հազ. հա տարածքը գյուղատնտեսական տեսակետից համարվում է ոչ լիարժեք հողատարածք: Այդ տարածքներում վերջին 50-60 տարիների ընթացքում կատարվել են անտառապատման լայնածավալ միջոցառումներ՝ հիմնվել է շուրջ 13 հազ. հա անտառ: Այս միջոցառման շնորհիվ ոչ միայն ամրակայվել են ափամերձ շարժուն գրունտները, նվազեցվել է ավազանի լանդշաֆտների էրոզիոն տարբեր նյութերի ազատ մուտքը Սևանա լիճ, կանխվել է լճի աղտոտումն այդ նյութերով:

Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը հանգեցնում է մեծ տարածքների ջրածածկման, ինչի արդյունքում էլ ավելանում է ջրի աղտոտվածությունն օրգանական նյութերով և նիտրատներով: Սևանա լիճ թափվող գետերի մեծ մասն աղտոտված են նաև կոյուղաջրերով, որոնցում թույլատրելիից էապես բարձր է ֆոսֆորի տոկոսը: Գյուղատնտեսական գործունեության արդյունքում գետերն աղտոտված են նաև ազոտով:

Համաձայն Սևանա լճի ավազանի ֆլորայի վերաբերյալ թարմացված և ճշգրտված տվյալների՝ այստեղ հանդիպում է անոթավոր բույսերի 1716 տեսակ, սակայն ազգային պարկի տարածքում հանդիպող անոթավոր բույսերի թիվը 1056-ն է: 2005 թվականից հետո ազգային պարկի տարածքում հայտնաբերվել են մի շարք նոր բուսատեսակներ: ԱՊ-ի տարածքում հանդիպում են ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված 16 բուսատեսակ:

«Սևան» ազգային պարկի» տարածքներում հաշվարկվում են փափկամարմինների (Mollusca) 20 ընտանիքի պատկանող 37 տեսակներ, որոնցից 6-ը գրանցված են ՀՀ

կենդանիների Կարմիր գրքում, ինչպես նաև գրանցված են Coleoptera կարգի 238 տեսակ և Lepidoptera կարգի 21 տեսակ և այլն:

Սևանա լճի ավազանում հանդիպում է ձկների 9 տեսակ, որոնցից մեկը ներկայացված է 4 ենթատեսակով՝ Սևանի իշխան՝ Ձմեռային իշխան, Բոջակ, Գեղարքունի, Ամառային իշխան: Ինչպես նաև Սևանի կողակ, Սևանի բեղաձուկ: ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված է 3 տեսակ:

Սևանա լճի շնորհիվ՝ մարզը զբոսաշրջության ոլորտի համար բացառիկ հնարավորություններ ունի: Իր ափամերձ գոտու շնորհիվ, ենթակառուցվածքներով, բնության և մշակույթի հարուստ ժառանգությամբ առանցքային նշանակություն ունի Հայաստանի զբոսաշրջության ոլորտի բազմազանեցման համար:

Լճի շրջակայքում առկա են բազմաթիվ հյուրանոցներ, զբոսաշրջային տարաբնույթ հանգրվաններ, հանգստյան գոտիներ, լողափեր, ճանապարհային ցանց և ներքին փոխադրումների համար Երևան-Սևան-Վարդենիս գնացքը: Մարզում միջպետական և հանրապետական նշանակության գրեթե բոլոր ճանապարհները բարեկարգ են:

Լիճն իր եզակի էկոհամակարգով էականորեն ազդում է ոչ միայն մարզի բնապահպանական հավասարակշռության, այլև տնտեսության վրա: ԱՊ տարածքում ստեղծվել են 12 հանրային լողափեր: Կենսառեսուրսների օգտագործման տեսակետից մեծ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառումը և կայուն օգտագործումը, որում մեծ դերակատարություն ունի «Սևան» ազգային պարկը: Արդյունագործական ձկնորսության կազմակերպման մեջ ազգային պարկին ընձեռված են ինչպես վերահսկողական գործառույթներ, այնպես էլ կազմակերպման գործառույթներ՝ ձկան որսի իր կողմից ներգրավված ձկնորսների միջոցով: Ըստ այդմ՝ ԱՊ-ի չափաբաժինն ընդհանուր արդյունագործական ձկնորսության մեջ կազմել է 221 տ, ինչը կազմում է ընդհանուր թույլատրելի որսի չափաքանակի (300տ) մոտ 74%-ը: Այս գործառույթը հնարավորություն է տվել ազգային պարկին վերահսկողական գործառույթներն արդյունավետ իրականացնելու հետ մեկտեղ գեներացնել նաև որոշակի քանակի շահույթ: Այսպես, «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ն ապահովել է 26.2 մլն. դրամի հասույթ, որից շահույթը կազմել է 6.4 մլն. դրամ:

«Սևան» ազգային պարկի պահպանությունն իրականացվում է էկոպարեկային ծառայության և ջրային պարեկային ծառայության կողմից: Հատուկ նշանակության ջոկատն իրականացնում է շուրջօրյա հսկողություն՝ օրենսդրության խախտումների և այլ բնապահպանական խախտումների կանխարգելման և հայտնաբերման ուղղությամբ:

ԱՊ-ում իրականացվում են երկու խոշոր խմբի բաժանվող էկոհամակարգային ծառայություններ՝ ցամաքային և ջրային, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին համապատասխան էկոհամակարգային ծառայություններ է մատուցում:

Համաձայն հաշվետվության՝ ԱՊ-ի տարածքում 2006-2018 թթ. ընթացքում իրականացվել է շուրջ 2100 հա ծառաթփային բուսականության մաքրում: 2019 թ. կատարվել են մինչև 1901.5մ նիշը մաքրման ենթակա ջրածածկ, ջրածածկման ենթակա և ցամաքային ծառաթփային բուսականության քարտեզագրման և գույքագրման աշխատանքներ, ինչի արդյունքում մաքրվել է մոտավորապես 200 հա:

ՊՈԱԿ-ի կողմից անտառմաքրման աշխատանքների վերահսկման գործառույթը վերապահպահված է յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրի նախարարի հրամանով հաստատվող՝ Սևանա լճի ջրածածկ և ջրածածկման ենթակա և տարածքների մաքրման միջոցառումների փաստագրման և մոնիթորինգի իրականացման աշխատանքային խմբին:

2023 թ.-ին նախատեսվել էր 89 հա ջրածածկ տարածքների մաքրում, սակայն ներկայումս նախատեսվում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացնել 176.85 հա ջրածածկ անտառտնկարկների մաքրում Սևանի մասնաճյուղի, Սևանի և Վարդենիսի

մասնաճյուղի Արեգունի տեղամասերում: Համաձայն նախագծի՝ նախատեսվում է իրականացնել 379.95 հա մաքրման աշխատանքներ:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ ազգային պարկում թույլատրելի են միայն խնամքի և սանիտարական հատումները:

ԱՊ-ում սանիտարական հատումներն իրականացվում են ՀՀ կառավարության «Խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգը սահմանելու մասին» 2006 թ. հունիսի 22-ի N897-Ն որոշման և Գյուղատնտեսության նախարարի «Պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերման կարգը հաստատելու մասին» 6 մայիսի 2013 թ. N-80-Ն հրամանի համաձայն:

Սանիտարական հատումներն ԱՊ-ի տարածքում իրականացվում են ընտրովի, հեռացվում են միայն չորացած, տապալված, քամատապալ, ձյունակոտոր և կենսունակությունը կորցրած ծառերն, իրականացվում է ջրածածկի ենթակա տարածքների անտառմաքրման աշխատանքներ:

Ազգային պարկի տարածքում արգելված է թունաքիմիկատներով պայքարի միջոցառումների իրականացումը:

Համաձայն ՌԷԳ հաշվետվության՝ ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով տարեկան իրականացվում են 5-10 հա անտառվերականգնման աշխատանքներ՝ գերազանցապես ազգային պարկի տնկարանում աճեցված տնկանյութով: Տարածքներն ընտրվում են՝ առանձնացնելով անտառային հատվածներում առկա բացատները և 90-ական թվականներին հատված անտառների տեղադիրքերը:

ՊՈԱԿ-ի կողմից հիմնված անտառտնկարկներում կատարվում են խնամքի աշխատանքներ և կպչողականության ցածր ցուցանիշների դեպքում իրականացվում են նաև լրացման աշխատանքներ:

Տնկարանային տնտեսությունում աճեցվող տնկիները հիմնականում բավարարում են միայն ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող անտառտնկման աշխատանքներին, աճեցվում են ուռենու, բարդու, հացենու, խնձորենու և փշատենու տնկիներ: Տնկարանի տարեկան արտադրողականությունը կազմում է մոտ 10000 տնկի:

ԱՊ-ի հանրային N1 և N3 լողափներում իրականացվել է ծառատունկ՝ Սևանի մասնաճյուղում առկա սոճու բնական վերաճից ստացված 200 հատ տնկիներով: Ասեղնատերև մոնոկուլտուրաներն աստիճանաբար վերափոխվել են խառն անտառների՝ դրա մասնաբաժինն իջեցնելով մինչև 25 %: Տնկարկների սանիտարական վիճակի բարելավումն իրականացվում է առավելապես սոճու մոնոկուլտուրաների տեսակային փոփոխությամբ:

Ընդհանուր առմամբ ազգային պարկի տարածքում սոճու մոնոկուլտուրաները զբաղեցնում են մոտ 2178 հա տարածք: Դրանք առկա են 5 մասնաճյուղերի բոլոր 14 տեղամասերում, սակայն 2/3-ը գտնվում է Նորատուսի և Մարտունու մասնաճյուղերի Այրիվան, Նորատուս, Ծովինար, Վարդենիկ, Երանոս, Մարտունի տեղամասերում: Այս տնկարկները խոցելի են և ոչ կենսունակ տարատեսակ վնասատուների և հիվանդությունների նկատմամբ:

Կառավարման պլանի մշակման շրջանակում «Սևան» ազգային պարկի տարածքագործառնական գոտիների՝ մասնավորապես արգելոցային և արգելավայրային գոտիների առանձնացման հիմքում ընկած է ԱՊ-ի կենսաբազմազանության հետազոտությունների արդյունքների վրա հիմնված քարտեզագրումը՝ մասնավորապես ՀՀ Կարմիր գրքում գրանցված և ազգային պարկի տարածքում հանդիպող բույսերի և կենդանիների արեալների, բազմազանության ու տեսակների կուտակման վայրերի քարտեզագրումը: Ռեկրեացիոն գոտու առանձնացման համար առաջնային դեր է տրվել հանգստի և զբոսաշրջության հետ կապված տարածքների առկայությունը, իսկ տնտեսական գոտու դեպքում՝ առկա և պլանավորվող տնտեսական գործունեությունը, որը

սակայն չպետք է վնասի էկոհամակարգերի ամբողջականությանն ու կենսունակությանը: Համաձայն Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) կողմից մշակված տարբեր կատեգորիաների պահպանվող տարածքների կառավարման ուղեցույցի երկրորդ կատեգորիայի՝ «Ազգային պարկ»-ի պարագայում էկոհամակարգերի պահպանությունը համատեղվում է կրթության, ռեկրեացիայի և այցելությունների, ինչպես նաև տեղաբնակների և համայնքների կենսագործունեության կարիքների հետ: Այսպիսով, Սևան ազգային պարկի կառավարման պլանը կարևոր դերակատարություն ունի ոչ միայն կենսաբազմազանության պահպանության, այլ նաև մարդու կենսագործունեությանն անհրաժեշտ բնական պաշարների կայուն օգտագործման տեսանկյուններից:

2007-2011 թթ. կառավարման պլանի սահմանների և գոտիավորման առաջարկով ԱՊ-ի տարածքը, Սևանա լճի հայելու հետ միասին, կազմում էր 147343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22585 հա: Պահպանման գոտու տարածքը կազմում էր 342920 հա: Արգելոցային գոտին ներառում էր 5 արգելոց, որոնց ընդհանուր մակերեսը կազմում էր 15370 հա, որից ցամաքային տարածքը՝ 7170 հա, իսկ ջրայինը՝ 8200 հա: Սույն կառավարման պլանի շրջանակներում, ազգային պարկին առաջադրվող միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու և էկոհամակարգերի պահպանությունն ապահովելու նպատակով նախատեսվում է ԱՊ-ի տարածքը սահմանել 152478.31 հա, այդ թվում՝ 24578.31 հա ցամաքային տարածք: Ըստ այդմ նախատեսվում է արգելոցային գոտու ցամաքային տարածքը հասցնել 16244.62 հա, որից ցամաքային տարածքը՝ 9536.51 հա, իսկ ջրայինը՝ 6708.11 հա: Արդյունքում ընդլայնվելու են առկա բոլոր 5 արգելոցային հատվածները: Արգելոցային գոտին ունի մարդածին ազդեցության խիստ սահմանափակումներ՝ բացառությամբ գիտակրթական գործունեությունը, կարգավորվող ճանաչողական զբոսաշրջությունը, սահմանված կարգով խոտհունձն ու մեղվաբուծությունը: Գործունեության այլ տեսակներն արգելված են:

Արգելավայրային գոտու պարագայում նախորդ կառավարման պլանով առաջարկվել է 2 արգելավայր, որոնց մակերեսը կազմում էր 2652 հա, այդ թվում ցամաքային տարածքը՝ 2 359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Այս կառավարման պլանով նախատեսվում է արգելավայրային գոտին ավելացնել 4181.1 հեկտարով, որի արդյունքում այն կկազմի 6833.1 հա, ներառյալ 5729.9 հա ցամաքային և 1103.2 հա ջրային տարածք:

Ռեկրեացիոն գոտու ընդհանուր մակերեսը նախորդիվ կազմել է 4753 հա, իսկ տնտեսական գոտու պարագայում՝ 11266 հա: Արգելոցային ու արգելավայրային գոտիների ավելացման արդյունքում այդ գոտիները նվազել են՝ կազմելով համապատասխանաբար 3658.59 հա և 5557.51 հա: Համաձայն նախագծի՝ պահպանման գոտու տարածքը կազմում է 338192.11 հա:

Տարածքագործառնական գոտիների առաջարկը ենթադրում է փուլային մոտեցում, որն իրականացվելու է սահմանների վերանայմանը զուգահեռ կամ դրա վերջնականացումից հետո:

Առաջին փուլով նախատեսվում է առավել սահմանափակ թվով արգելոցային գոտու ավելացում, իսկ երկրորդ փուլով անհրաժեշտ նախապայմանների առկայության դեպքում՝ արգելոցային գոտին էապես ավելացվելու է՝ տնտեսական գոտու հաշվին: Առաջին փուլով ավելացվելու է նաև արգելավայրային գոտին:

«Սևան» ԱՊ կառավարման պլանի ռազմավարական էկոլոգիական գնահատումում հաշվի է առնվել ոչ միայն ավանդական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, այլ հիմնականում կենտրոնացվել է Կառավարման պլանով սահմանված 8 ռազմավարական նպատակների իրագործմանը միտված ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները:

ԱՊ-ի երկարաժամկետ ռազմավարական նպատակները ցույց են տալիս գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները, որոնց խնդիրները փոխկապակցված են մի շարք հարակից ոլորտների ռազմավարական նպատակների հետ (այդ թվում ջրային ռեսուրսների, անտառների կայուն կառավարման, կլիմայի փոփոխության հարմարվողականության, համայնքային կայուն զարգացման և այլն):

Տեսլականից բխող երկարաժամկետ ռազմավարական նպատակներ են սահմանվել.

- ապահովել, որ «Սևան» ազգային պարկի առաջնային և այլ նպատակները համահունչ լինեն պահպանվող տարածքների միջազգային չափորոշիչներին,
- 30×30 նախաձեռնության համաձայն՝ մեծացնել արգելավայրային, արգելոցային գոտին,
- ապահովել տարածքի հարմարվողականությունն ապագա էական միտումներին, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, ջրի մակարդակի բարձրացումը և մարդածին ազդեցությունները: Ապահովել տարածքի կառավարման համակարգի ճկունությունը,
- պահպանել և վերականգնել ԱՊ-ի թիրախային բնական և ձևափոխված ցամաքային և ջրային էկոհամակարգերի վիճակը, նպաստել դրանց վերարտադրմանը,
- պահպանել բնական ռեսուրսները՝ թույլատրելով դրանց կայուն օգտագործումը,
- նպաստել և կարգավորել ռեկրեացիան և բնությանը համահունչ այցելությունների ձևերը, որոնք նպաստում են տեղական տնտեսության զարգացմանը,
- նպաստել իրազեկության բարձրացմանը, էկո-կրթություն իրականացնել և բարելավել շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցությունը,
- հասնել ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ֆինանսական կայունության:

ԱՊ-ի կառավարման պլանի ռազմավարական փաստաթղթով նախատեսվում է 7 ռազմավարական նպատակների իրագործմանը միտված ծրագրեր.

- վարչական ծրագիր,
- պահպանության ծրագիր,
- ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման ծրագիր,
- հետազոտությունների և կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագիր,
- այցելությունների կազմակերպման ծրագիր,
- էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագիր,
- ֆինանսական և մարքեթինգային ծրագիր:

Նախատեսված ծրագրերի թիրախները/խնդիրները, էությունը, բաղադրիչները և իրագործման ազդեցությունները մանրամասն ամփոփված են ՌԷԳ հաշվետվությունում:

«Սևան» ԱՊ-ի կառավարման պլանով սահմանված ազգային պարկի տեսլականը և երկարաժամկետ ռազմավարական նպատակները համահունչ են Սևանա լճի մասին ՀՀ օրենքում ներկայացված Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պետական քաղաքականության սկզբունքներին, հիմունքներին և ռազմավարությանը:

Կառավարման պլանը բխում է նաև Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» №1656-Ն որոշմամբ հաստատված 2024 թվականի տարեկան ծրագրով նախատեսված Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումներից: Մասնավորապես՝

- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի մոնիթորինգի իրականացում,

- Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրում,
- Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնում,
- Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում,
- «Սևան» ազգային պարկի և համայնքների միջև սահմանների ճշգրտում,
- Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում:

«Սևան» ազգային պարկի կառավարման պլանով սահմանված ռազմավարական նպատակները և դրանց իրագործմանը միտված ծրագրերը մեծամասամբ ունեն դրական բնապահպանական կողմնորոշում, ինչն անուղղակիորեն կհանգեցնի նաև հանրային առողջության վրա որևէ բացասական ազդեության կանխմանը: Ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների մաքրման ու այլ անտառային լանդշաֆտների վերականգնման միջոցառումների, կենսաբազմազանության մշտադիտարկումների, էկոլոգիական կրթության, հանրային մասնակցության և հաղորդակցության ծրագրերի բարեհաջող իրագործումը կհանգեցնի՝

- Սևանա լճում ջրի որակական հատկանիշների բարելավմանը,
- ափամերձ տարածքների մաքրմանը և անտառային տարածքների ընդլայնմանը, լանդշաֆտների վերականգնմանը,
- կլիմայի փոփոխության հարմարվողականությանը,
- Սևանա լճում ձկնատեսակների ավելացմանը,
- հանրության էկոլոգիական գիտելիքների մակարդակի և գիտակցության բարձրացմանը և այլն:

Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման համար շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և կառավարման պլանով սահմանվել է ՌԷԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմնադրույթային փաստաթղթում ներառված միջոցառումների ծրագրով նախատեսվում է ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանն ուղղված միջոցառումներ, ջրի որակի բարելավման, էկոհամակարգի պահպանման և այլ միջոցառումներ:

- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության, այդ թվում՝ ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում,
- Սևանա լճում և լճի ջրհավաք ավազանում հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում,
- Սևանա լճի ջրհավաք ավազանում ստորերկրյա ջրերի մոնիթորինգի իրականացում,
- Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանի գետերում հիդրոկենսաբանական մոնիթորինգի իրականացում:

Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաբաժինների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պրոցեսների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում,

- Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության ազդեցության գնահատում Սևանա լճի էկոհամակարգի վրա,

- Ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության գործունեության հետևանքով կենսածին տարրերի (ֆոսֆոր, ազոտ) քանակի հաշվարկում և Սևանա լճի էկոհամակարգի վրա ազդեցության գնահատում:

«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ՝

- Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում:

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում՝

- էկոհամակարգի վերականգնման և կայուն օգտագործման գիտական հիմունքների մշակում՝ «Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» ծրագիր:

Բացի վերը նշված միջոցառումներից՝ տարբեր իրավական փաստաթղթերով, ազգային և միջազգային ծրագրերով, տարբեր կազմակերպությունների կողմից ազգային պարկի տարածքում նախատեսվում և իրականացվում են մշտադիտարկման տարբեր տեսակներ:

Համաձայն Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանի՝ նախատեսվում է մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտացանցի և մոնիթորինգի ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝

1. Մթնոլորտային օդի մոնիթորինգ,
2. Անտառային մոնիթորինգ (այդ թվում՝ ազգային անտառային մշտադիտարկում և գույքագրում 2022-2029թթ.),
3. Մակերևութային ջրերի հիդրոլոգիական մոնիթորինգ,
4. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ,
5. Առաջացող կենցաղային թափոնների և դրանց հեռացման վայրերի ուսումնասիրություն, հողային ծածկույթի մոնիթորինգ:

ՌԷԳ փաստաթղթում ներառված է կառավարման պլանի զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, հիմնավորվել է ընտրված տարբերակը: Հաշվի առնելով, որ բնության հատուկ պահպանվող տարածքների, ներառյալ «Սևան» ազգային պարկի համար կառավարման պլանի առկայությունն օրենսդրական պահանջ է, կարելի է փաստել, որ այն չունի այլընտրանք և հանդիսանում է ազգային պարկի պահպանման, վերականգնման, կայուն զարգացման և արդյունավետ կառավարման շրջանակները սահմանող հիմնական փաստաթուղթը:

Այսպիսով՝ զրոյական տարբերակը տեսականորեն կնշանակի «Սևան» ազգային պարկիկառավարումն՝ առանց կառավարման պլանի գործունեություն, քանի որ նախկին կառավարման պլանը նախատեսված է եղել 2007-2011 թվականների համար և չնայած այն հանգամանքին, որ դեռևս գործում է, սակայն կորցրել է իր արդիականությունը և հաշվի չի առնում առկա բնապահպանական վտանգները, մարտահրավերները և զարգացման միտումները:

Պատճառաբանական մաս. Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործողություններն ընդգրկում են «Սևան» ազգային պարկի տարածքը, որը ներառում է բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական ու կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները:

Ամփոփելով, կարելի է եզրահանգել, որ «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի իրագործումը՝ բնապահպանական և սոցիալական դրական ազդեցություն կթողնի, թե մարզային (Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքներ) և թե հանրապետության կտրվածքով:

Հատկանշական է, որ «Սևան» ԱՊ-ի տեսլականը, ռազմավարական նպատակները, թիրախները և առաջարկվող ծրագրերը չեն հակասում Սևանա լճի մասին ՀՀ օրենքի, Սևանա լճին առնչվող ենթաօրենսդրական ակտերին, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությանը: Կառավարման պլանը համահունչ է նաև ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին, ինչպես նաև նպաստում է ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարությունները, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, կադաստրի կոմիտեն, Գեղարքունիքի մարզպետարանը:

Փորձաքննության գործընթացում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման պլանի փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և դիտողությունները: Փորձաքննության ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզպետարանում իրականացվել են հանրային լսումներ:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար կատարել շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն/ մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակությանը:
- Հետևել ՌԷԳ-ում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական և այլ նորմերի պահպանմանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրով ներկայացված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման փաստաթղթին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան